ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 65-Ա

<<28>> սեպտեմբերի 2023 թվականի քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի ՎՃՌՈՎ /ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾ՝ ՇԴ3/0554/02/18/ ՔԱՂԱՔԱՑԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՐԶ ՇԻՐԱԿ, ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ԳՅՈՒՂ ԼՈՒՍԱՂԲՅՈՒՐ 1-ԻՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 2/2 ՀԱՍՑԵՅՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԹՌՉՆԱՆՈՑԻ ՇԵՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 08-049-0226-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.545253 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ, 2-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2018 թվականի սեպտեմբերի 25-ի վճիռը /քաղաքացիական գործ՝ ՇԴ3/0554/02/18/՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Լուսաղբյուր բնակավայրի 1-ին փողոց թիվ 2/2 հասցեում գտնվող թռչնանոցի շինության նկատմամբ ձեռքբերման վաղեմության ուժով քաղաքացի Հովհաննես Արտավազդի Մանուկյանի սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ, հաշվի առնելով քաղաքացու 2023 թվականի հուլիսի 31-ի դիմումը՝ շինության պահպանման ու սպասարկման համար նախատեսված 0.545253 հեկտար մակերեսով հողամասը /կադաստրային ծածկագիր՝ 08-049-0226-0007 / իրեն վաճառելու մասին.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2018 թվականի սեպտեմբերի 25-ի վճիռով /քաղաքացիական գործ՝ ՇԴ3/0554/02/18/՝ քաղաքացի Հովհաննես Արտավազդի Մանուկյանի սեփականության իրավունքը ճանաչված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Լուսաղբյուր բնակավայրի 1-ին փողոց թիվ 2/2 հասցեում գտնվող թռչնանոցի շինության պահպանման ու սպասարկման համար նախատեսված համայնքի սեփականություն հանդիսացող 08-049-0226-0007 կադաստրային ծածկագրով արդյունաբերության,

ընդերքօգտագործմանև այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության **0.545253 հեկտար** մակերեսով հողամասը, ուղղակի վաճառքով, տվյալ հողամասի կադաստրային արժեքի չափով, ընդամենը՝ **774260 (յոթ հարյուր յոթանասունչորս հազար երկու հարյուր վաթսուն)** Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով վաճառել քաղաքացի Հովհաննես Արտավազդի Մանուկյանին (անձնագիր՝ AV 0677157, տրված՝ 16.03.2023 թվականին, 099-ի կողմից, հաշվառման հասցեն՝ քաղաք Գյումրի, Գ. Նժդեհի հրապարակ, շենք 4, բնակարան 7):

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար Արման Սարիբեկյանին՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացի Հովհաննես Արտավազդի Մանուկյանի հետ /այսուհետև՝ քաղաքացի/ կնքել սույն որոշման 1-ին կետով նախատեսված հողամասի առուվաճառքի պայմանագիր և ապահովել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն սույն որոշման մասին պատշաճ ծանուցման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ-11	Դեմ – 0	Ձեռնպահ – 0
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	----------	----------	----------
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ	----------	----------	----------
Ա. ՇԱԲՈՅԱՆ	----------	----------	----------
Հ. ՋԱՏԻԿՅԱՆ	----------	----------	----------
Ժ. ԱԼԵՔՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Ն. ՍԱՐՈՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ	----------	----------	----------
Մ. ԵՆՈՔՅԱՆ	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<28>> սեպտեմբերի 2023 թ.
քաղաք Մարալիկ